է ընդունված լիներ ավելի վաղ), մինչդեռ Դատարանի գնահատմամբ ապացույցներ ներկայացնելու փուլում, ի թիվս այլ փաստաթղթերի, միայն այդ գրության առկայությունը չի կարող բավարար գնահատվել պատասխանողի կողմից իր ապացուցման պարտականությունը պատշաճ կատարած լինելու փաստի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ քննարկվող գրությունը կրել է տեղեկատվական բնույթ Ընթացակարգով շահագրգիռ անձանց, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության՝ որպես «Գնումների մասին» օրենքով նախատեսված լիազոր մարմնի համար, սակայն քանի դեռ վիճարկվող որոշումը չի ներկայացվել, Դատարանը զրկված է գնահատելու փաստաթղթի իրավաչափությունը, օրենդրական պահանջների պահպանված լինելու հանգամանքները:

Փաստերի նման դասավորվածության պայմաններում, հիմք ընդունելով ապացուցման պարտականության վերը նշված նորմերը՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցվորի վկայակոչած փաստերը համարվում են հաստատված: Ուստի հայցը ենթակա է բավարարման:

5.1. Դատական ծախսերի բաշխման հարցը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով հայցը բավարարվելու հանգամանքը՝ Դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձման ենթակա է 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12, 360-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Բավարարել «ԿԱՌԻՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-Գ» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

1.1. Անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «ԿԱՌԻՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-Գ» ծածկագրով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «ԿԱՌԻՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վճիռը _____ *թ. մտել է օրինական ուժի մեջ:*